ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ »

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՎՊՄԻ)

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՎՊՄԻ ռեկտոր, բգդ, պրոֆեսոր

_____Խաչատրյան Գ.Կ.

“__22__” __12_ 2011թ.

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՌԵՖԵՐԱՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Ընդունվել է ՎՊՄԻ ՊՈԱԿ գիտխորհրդում

(արձանագրություն թիվ 10 “__22__” __12__ 2011թ.)

Վանաձոր

2011

1. Ընդհանուր դրույթներ

Սույն մեթոդական ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակված է Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) Կանոնադրության, «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման ու հաշվառման կանոնակարգ»-ի և «Ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և կատարման կարգ»-ի հիման վրա :

Համաձայն ՀՀ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքի՝ ներկայումս Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացը իրականացվում է ըստ Բոլոնյան գործընթացի հիմնական սկզբունքների: Այդ սկզբունքների ներդրումը և կիրառումն ուսումնական գործընթացում բերում է ուսանողների լսարանային ծանրաբեռնվածության ժամերի կրճատմանը և ինքնուրույն աշխատանքի ծավալի ավելացմանը: Ուսանողների ինքնուրույն աշխատանքը կարևորվում է նաև նրանց գիտելիքների միջանկյալ գնահատման տեսակետից:

Սակայն ուսանողներից շատերի մոտ նկատվում են դժվարություններ՝ գիտական և ուսումնական գրականության վերլուծության, սեղմագրման, սկզբնաղբյուրների հետ աշխատելու գործում:

Կապված այդ հիմնախնդրի հետ՝ուսանողների մոտ դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հետ ինքնուրույն աշխատելու ունակությունների և կարողությունների ձևավորումը ուսումնական գործընթացի հիմնական խնդիրներից մեկն է:

Սույն մեթոդական ուղեցույցի նպատակն է՝ նպաստել ուսանողների մոտ ինքնուրույն վերլուծական գործունեության համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը, նրանց տեսական և գործնական պատրաստվածության բարելավմանը, ուսումնական նյութի յուրացմանը՝ ռեֆերատների պատրաստման և ներկայացման միջոցով:

2. Ռեֆերատի նպատակը, առաջադրումը և ծավալը

2.1. Ռեֆերատը (լատիներեն referre բառից, ինչը նշանակում է զեկուցել, հայտնել) ուսանողների ինքնուրույն գրավոր աշխատանքի ձևերից մեկն է, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, հանրագիտարաններ և այլն):

2.2. Ռեֆերատի վրա աշխատելու ընթացքում ուսանողը պետք է սովորի ինքնուրույն գտնել, կարգավորել և իմաստավորել տվյալ թեմային համապատասխանող գիտական գրականությունը:

2.3. Ռեֆերատի թեմաները առաջարկում է դասախոսը: Ուսանողը կարող է ընտրել ռեֆերատի թեման առաջարկվող ցուցակից, ինչպես նաև ինքնուրույն ընտրել ռեֆերատի թեման և համաձայնեցնել այն դասախոսի հետ: Թեմայի անվանումը պետք է լինի հակիրճ և համապատասխանի ռեֆերատի բովանդակությանը:

2.4. Ռեֆերատում հակիրճ շարադրվում է ռեֆերատի թեմային վերաբերող գրական աղբյուրների բովանդակությունը (նշելով աղբյուրները, օրինակ՝[3]), ինչպես նաև ուսանողի փաստարկված քննադատական կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ:

2.5. Ռեֆերատի ծավալը, կախված թեմայից, կարող է լինել մինչև 10 էջ:

3. Ռեֆերատի վրա աշխատելու փուլերը

3.1. Գրական աղբյուրների որոնում

Ռեֆերատի կատարման համար անհրաժեշտ գրականության ցանկը տրամադրում է դասախոսը: Ուսանողը պետք է որոնի և գտնի ռեֆերատի թեմային վերաբերող լրացուցիչ աղբյուրներ (գրականություն, հոդվածներ, համացանցային նյութեր և այլն) և համակարգի այն: Ուսանողը պետք է սովորի կազմել գրականության ցուցակ՝ նշելով տվյալ գրական աղբյուրի մատենագրական տվյալները:

3.2. Աշխատանք գրական աղբյուրների հետ

3.2.1. Աղբյուրների հետ աշխատանքը սկսվում է ընթերցումից: Ընթերցման ընթացքում ընտրվում և նշվում են այն էջերը և տեքստի այն հատվածները, որոնք պահանջվում են տվյալ տեքստի գլխավոր միտքը հասկանալու, ընկալելու համար:

3.2.2. Տեքստի առանձին հատվածներ կարդալուց, ուսումնասիրելուց և ընտրելուց հետո ուսանողը պետք է կատարի ռեֆերատի թեմային համապատասխանող գրառումներ (կատարելով հղումներ աղբյուրներին):

Ռեֆերատ կազմելու համար օգտագործվում է գրառումների երեք տեսակ՝սեղմագիր, համառոտագիր, մեջբերում:

3.2.2.1. **Սեղմագիրը** տվյալ թեմային վերաբերող մեկ սկզբնաղբյուրի, դասախոսության, զեկուցման կամ որևէ այլ անհրաժեշտ նյութի համառոտ գրավոր շարադրանքն է: Սեղմագրման ընթացքում անհրաժեշտ է որքան հնարավոր է մանրամասն շարադրել տվյալ տեքստի հիմնական իմաստը՝ չանդրադառնալով ոչ կարևոր, երկրորդական տեղեկություններին:

Սեղմագրում անհրաժեշտ է ընդգծել ընդհանուր դրույթները, վերնագրերը, թեորեմները և բանաձևերը (անպայման նշելով սկզբնաղբյուրները):

Սեղմագիրը պետք է լինի ոչ թե սկզբնաղբյուրի մեխանիկական կրկնություն, այլ ներկայացնի տվյալ սկզբնաղբյուրի հիմնական մտքի շարադրանքն ուսանողի կողմից:

Սեղմագրերի հիմնական տեսակներն են.

ա) պլանային - կոնսպեկտում տրվում է տվյալ նյութի նախապես կազմած պլանի յուրաքանչյուր հարցի պատասխանը,

բ) տեքստային - կազմվում է հիմնականում մեջբերումներից,

գ) լրահավաք սեղմագիր– պարունակում է գրառումներ, մեջբերումներ, և այլն:

3.2.2.2.**Համառոտագիրը** որևէ տպագիր նյութի (գիրք, հոդված) հակիրճ ընդհանրացված բնութագիրն է՝ տվյալ նյութի թեմայի մասին ընդհանուր պատկերացումներ տալու նպատակով:

3.2.2.3. **Մեջբերումը** տեքստի հեղինակի խոսքի բառացի, առանց փոփոխության ներկայացումն է, որը կիրառվում է որոշակի փաստերի և դատողությունների հաստատման համար: Մեջբերման կիրառման դեպքում պարտադիր նշվում է հեղինակի ազգանունը և կատարվում է համապատասխան հղում սկզբնաղբյուրին:

3.3.1. Ռեֆերատի պլանի կազմում:

Ռեֆերատի պլանի կազմումը ռեֆերատի կազմման նախապատրաստական աշխատանքի վերջին փուլն է: Ռեֆերատի պլանը պետք է կազմվի ուսանողի կողմից և համաձայնեցվի դասախոսի հետ:

3.3.2. Ռեֆերատի կազմում

Տվյալ թեմայի ուղղությամբ սեղմագրեր և ռեֆերատի պլան կազմելուց հետո պետք է անցնել ռեֆերատի տեքստի կազմման աշխատանքներին:

3.4. Ռեֆերատի բաղադրիչները

3.4.1. **Տիտղոսաթերթ** (հավելված 1)

Տիտղոսաթերթի վրա պարտադիր գրվում է ինստիտուտի լրիվ անվանումը, ռեֆերատի թեման, ուսանողի տվյալները (ազգանուն, անուն, ֆակուլտետ, կուրս), ղեկավարի ազգանունը և անունը, կոչումը, ռեֆերատի կատարման տարին:

3.4.2. **Բովանդակություն**

«Բովանդակություն» բաժնում ներկայացվում են ռեֆերատի բոլոր բաժինների վերնագրերը՝ էջերի նշմամբ:

Օրինակ՝ Գրական վերլուծություն

Գլուխ 1. Մանկավարժական խորհուրդների կառուցվածքը ……3

3.4.3. **Ներածություն**

Ներածությունում շարադրվում է թեմայի ուսումնասիրվածության ներկա իրավիճակը և վերջին ձեռքբերումները (եթե կան), ներկայացվում են ռեֆերատի նպատակը և խնդիրները:

3.4.4. **Գրականության վերլուծություն**

Գրականության վերլուծությունը ռեֆերատի հիմնական մասն է: Այն կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի ենթաբաժիններից, որոնք պետք է համապատասխանեն ռեֆերատի պլանին: Ռեֆերատի հիմնական մասում տրամաբանորեն և իմաստավորված շարադրվում են ուսումնասիրված գրականության գլխավոր դրույթները և գաղափարները, ռեֆերատի ներածությունում ներկայացված հարցերի և խնդիրների պատասխանները և սեփական դիտարկումներն ու վերլուծությունները (եթե այդպիսիք կան, դրանք համեմատվում են գրական աղբյուրներում բերված տվյալների հետ):

3.4.5. **Ամփոփում**

«Ամփոփում» բաժնում ամփոփվում են գրական տվյալները և սեփական դիտարկումների արդյունքները (եթե այդպիսիք կան): Ամփոփումը ներկայացվում է եզրակացությունների, եզրահանգումների կամ թեզիսների ձևով:

Եզրակացությունը հիմնական տվյալների և փաստերի հակիրճ ամփոփումն է:

Եզրահանգումներ կատարվում են այն դեպքում, երբ ամփոփվում են մեծաթիվ փաստեր: Եզրահանգումները ռեֆերատի խնդիրների հակիրճ և հստակ պատասխաններն են:

Թեզիսները ներառում են աշխատանքի բոլոր բաժինների հիմնական դրույթների հակիրճ շարադրումը:

3.4.6. **Օգտագործված գրականության ցանկ**

Այս բաժնում՝ ըստ հղումների հերթականության, ներկայացվում է օգտագործված գրականության ցանկը:

Գրքերի համար հերթականությամբ շարադրվում է հեղինակի ազգանունը և անվան, հայրանվան առաջին տառերը, գրքի վերնագիրը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, տարին, էջերը:

Հոդվածի համար նշվում է հոդվածի հեղինակի ազգանունը, անվան, հայրանվան առաջին տառերը, հոդվածի և ժողովածուի (ամսագրի, թերթի) անվանումը, հատորի կամ պարբերության համարը, էջերը (հավելված 2):

3.5. **Պահանջներ ռեֆերատի բովանդակության վերաբերյալ**

3.5.1. Ռեֆերատը համարվում է հեղինակային աշխատանք, շարադրվում է ուսանողի խմբագրությամբ և նրա բառերով:

3.5.2. Ռեֆերատի տեքստը պետք է լինի կապակցված և ամբողջական, թեմային համապատասխանող հարցերը պետք է շարադրվեն հաջորդաբար, պարզից դեպի բարդը: Ռեֆերատում ուսանողը պետք է շարադրի նաև իր սեփական մտքերը, ներկայացնի իր վերլուծական վերաբերմունքը տվյալ հարցի նկատմամբ:

3.5.3. Այն դեպքում, երբ մեջբերվում է որևէ հեղինակի միտքը, գաղափարը, կամ օգտագործվում են որևէ թվային տվյալներ, պետք է պարտադիր կատարել հղում՝ տվյալ հեղինակի համապատասխան աշխատանքի վրա:

3.5.4.***<u>Գրականությունից, ինտերնետից կամ այլ աղբյուրներից պատրաստի աշխատանքները որպես սեփական աշխատանք ներկայացնելը համարվում է գրագողություն:</u>***

3.5.5. Ռեֆերատի գրելաոճը պետք է համապատասխանի գիտական ոճի կանոններին: Հավելված 3-ում ներկայացված են ռեֆերատի լեզվաոճական որոշ առանձնահատկություններ:

3.6. **Ռեֆերատի ձևավորման պահանջները**

3.6.1. Ռեֆերատը ներկայացվում է A4 չափսի (210x297) սպիտակ թղթի մեկ երեսի վրա, 12 տառաչափով, 1,5 միջակայքով: Էջերի լուսանցքներն են. աջից՝ 1սմ, ձախից՝ 3 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2,5 սմ, Arial Armenian, Arial LatRus և Times New Roman (օտար լեզուներով գրված ռեֆերատների և գրական աղբյուրները նշելու դեպքում) տառատեսակներով:

3.6.2. Ռեֆերատը սկսվում է տիտղոսաթերթով (հավելված 1): Տիտղոսաթերթը չի համարակալվում: Աշխատանքը համարակալվում է երկրորդ էջից՝ բովանդակությունից: Էջերի համարակալումը կատարվում է էջի ներքևում՝ կենտրոնական մասում: Աշխատանքի լուրաքանչյուր բաժին պարտադիր պետք է ունենա իր վերնագիրը, որը պետք է ընգծվի (համակարգչային շարվածքի դեպքում՝ Bold (ընդգծված) ձևով):

3.7. Ռեֆերատի ներկայացումը և գնահատումը

3.7.1. Ուսանողը պարտավոր է ներկայացնել պատրաստի ռեֆերատը դասախոսին՝ տվյալ առարկայի դասավանդման պլանով նախատեսված ժամկետներում:

3.7.2. Դասախոսը ստուգում է ռեֆերատի բովանդակությունը, դրա համապատասխանությունը առաջադրված թեմային, ինչպես նաև կառուցվածքի և ձևավորման համապատասխանությունը սույն կանոնակարգի պահանջներին, որոնց բավարարման դեպքում ռեֆերատը ընդունվում է և թույլատրվում է այն ներկայացնել բանավոր զեկուցման ձևով:

3.7.3. Ուսանողը պարտավոր է բանավոր զեկուցման ձևով ներկայացնել իր ռեֆերատը ամբիոնի կողմից նշանակված ժամկետում:

3.7.4. Ռեֆերատը գնահատվում է 20 բալանոց համակարգով՝ ըստ հետևյալ չափանիշերի.

ա) Ռեֆերատը ստուգելիս դասախոսը գնահատում է.

- ռեֆերատի թեմայով առաջադրված նպատակների ու խնդիրների ճիշտ ձևակերպումը և հստակությունը, դրանց լուծման ուղիների ճիշտ ընտրությունը, 0 - 2 միավոր,
- թեման համակողմանի, խորությամբ ներկայացնելը, նյութի շարադրման տրամաբանությունը և հաջորդականությունը, օրինակների և ցուցադրական նյութերի բնույթը , հավաստիությունը և այլն, 0 - 3 միավոր,
- ներկայացված տվյալների որակը՝ ռեֆերատի ավարտուն լինելու տեսակետից և կատարած եզրահանգումները (տրամաբանվածություն, միանշանակություն և այլն), 0 - 1 միավոր,
- օգտագործված լրացուցիչ գրական աղբյուրները, 0 - 1 միավոր,
- նյութի գրավոր շարադրման և ձևակերպման մշակույթը, 0 - 3 միավոր,

բ) Ռեֆերատի բանավոր ներկայացումը գնահատվում է մինչև 10 միավոր:

3.7.5. Ռեֆերատի գնահատականը հաշվառվում է որպես տվյալ առարկայից ուսանողի կատարած ինքնուրույն աշխատանքի գնահատական:

Հավելված 1

Ռեֆերատի տիտղոսաթերթի օրինակ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՊՈԱԿ

ՌԵՖԵՐԱՏ

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» թեմայով

Ֆակուլտետ՝	Մանկավարժության
Բաժին՝	Կրթության կազմակերպում
Կուրս՝	II
Առարկա՝	Մանկավարժություն
Ուսանող՝	Առաքելյան Անուշ
Դասախոս՝	Գևորգյան Պ.Հ.

Վանաձոր

2011

Հավելված 2

Օգտագործված գրականության ցանկ

1. Մովսիսյան Ա. Խ.- Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության: Երևան, Հայպետհրատ, 1958, էջ 305:
2. Ամիրջանյան Յու.Ա.,Սահակյան Ա.Ս.–Մանկավարժություն:Երևան, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժ. ինստիտուտի հրատարակչություն, 2005, էջ 67:
3. Тарабаева В.Б.-Современные проблемы развития учреждений высшего профессионального образования. Современные проблемы науки и образования, Электронный научный журнал, http://www.science-education.ru/29-1089, стр. 85-86.
4. Берулава Н.М.- Нация в опасности. Педагогика, № 5, 2008, стр.3-6.

Հավելված 3

Գիտական աշխատանքներում հաճախ օգտագործվող նախադասությունների նախընտրելի կառուցվածքներ են.
«….Ուսումնասիրման առարկա է հանդիսանում…», «…Մյուս կողմից, հարկ է ընգծել, որ…. », «…Այս միտքը միաժամանակ հաստատվում է նաև … հոդվածում….», «….Հարկ է նշել….», «…Պարզ է, որ…», «Գրական տվյալներից հայտնի է, որ….», «Այսպիսով, կարելի է նշել, որ…» և այլն:
Ստորև բերված աղյուսակում ներկայացված են գիտական գրականությունում օգտագործվող մի քանի նախընտրելի դարձվածքներ.

Խուսափել	***Օգտագործել***
Այսպիսով, մենք տեսնում ենք, թե ինչպես մի շարք դեպքերում	Այսպիսով, մի շարք դեպքերում
Առկա տվյալները վկայում են, որ	Ըստ առկա տվյալների
Իրենից ներկայացնում է	Ներկայացնում է
Նրա համար, որ	Որպեսզի
Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են այն մասին, որ	Համաձայն աղյուսակ 1-ի տվյալների

Ռեֆերատի կառուցվածքային բոլոր բաղադրիչներն իրար կապող հանձնարարելի լեզվական կաղապարներ

1. Ռեֆերատի հիմնական հարցի վերլուծությանն անցնելու համար նպատակահարմար է օգտագործել հետևյալ կաղապարները.
Այս (կամ՝ներկայացված, սույն, քննարկվող, նշված…) հոդվածում(աշխատանքում…) հեղինակը (գիտնականը, հետազոտողը՝… նշանավոր, ականավոր, հայտնի…) առաջ է քաշում (բարձրացնում է, քննության է առնում, դնում է) մի շարք (որոշ, մի քանի…) կարևոր (հիմնական, որոշակի, էական, գլխավոր, հետաքրքիր, հուզող, վիճելի…) հարցեր (խնդիրներ):
2. Հոդվածում քննվող հիմնական հարցերի վերլուծությանը կարելի է անցնել հետևյալ կաղապարների միջոցով՝
- Էական (կարևոր, հրատապ, ակտուալ) հարցերից մեկը, մեր կարծիքով (ըստ մեզ, ինչպես մենք ենք կարծում) այն է…
- Թվարկված հարցերից առավել հետաքրքիրը, մեր կարծիքով, այն է…
- Կուզեինք (ցանկալի է, կարելի է, անհրաժեշտ է, նպատակահարմար է) կանգ առնել…

Առանձին հարցերի վերլուծությունից ամփոփիչ եզրակացության անցնելու համար կիրառվում են հետևյալ կաղապարները՝
- Ամփոփելով՝ կարելի է ասել, որ…

- Հենվելով հոդվածում կատարված քննության վրա՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները…
- Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ…
- Ի մի բերելով մեր քննության տվյալները՝ հանգում ենք հետևյալին…

3. Գիտական հոդվածը մեկնաբանող ռեֆերատում սովորաբար գործածվում են հետևյալ ձևերը՝

3.1. Հոդվածի հիմնական հարցադրումներում գործածվող բայաձևեր՝ հեղինակը վերլուծում է, քննում է, վեր է հանում, շարադրում է, մեկնաբանում է (ինչը), խոսում է (ինչի մասին):

- արծարծվող թեմաների, հարցերի, խնդիրների թվարկման ժամանակ գործածվող բառախմբեր՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ…, նախ, ապա, հաջորդիվ, այնուհետև, բացի այդ, վերջապես, եզրափակելով, ամփոփելով…

3.2. Հոդվածում փորձարկվող կամ ուսումնասիրվող նյութի նշման համար օգտագործվող բայաձևեր՝ հեղինակը պարզաբանում է, ապացուցում է, հաստատում է, բացահայտում է, բնութագրում է, բնորոշում է, դասակարգում է, փաստում է, թվարկում է հատկանիշները, առանձնահատկությունները, հիմնական գծերը…

3.3. Հեղինակի կողմից հիմնական նյութին զուգահեռ քննված հարցերի ձևակերպման համար օգտագործվող բայաձևեր՝ հընթացս հեղինակը անդրադառնում է, նշում է, նկատում է, արձանագրում է, հիշատակում է…

3.4. Բայաձևեր, որոնք առավելապես կիրառվում են լրատվական բնույթի հոդվածներում, իրադարձությունները, իրավիճակը բնութագրելու համար՝ հեղինակը նկարագրում է, պատկերում է, լուսաբանում է, ցույց է տալիս, հաղորդում է վերջին նորությունները (իրադարձությունները):

3.5. Հեղինակի փաստարկումները (թվեր, օրինակներ, մեջբերումներ, դատողություններ, նկարներ, բազմազան տվյալներ, փորձարկման արդյունքներ և այլն) արձանագրող բայաձևեր՝ հեղինակը բերում է օրինակներ, աղյուսակներ, հենվում է, հղում է, հիմնավորում է, հաստատում է, ապացուցում է, համեմատում է, զուգադրում է, հակադրում է (ինչերը ինչին):

3.6. Հեղինակի կողմից առանձնահատուկ կերպով շեշտվող մտքերը հաղորդող բայաձևեր՝ հեղինակը առանձնացնում է, շեշտում է, ընդգծում է, մատնանշում է, հատկապես կանգ է առնում, բազմիցս, մի քանի անգամ, ևս մեկ անգամ շեշտում է, վերադառնում է այն հարցին, ուշադրությունը սևեռում է… և այլն:

3.7. Ընդհանրացնող, քննության արդյունքներն ամփոփող ձևակերպումներ՝ հեղինակը հանգում է (նրան), եզրակացնում է, ամփոփում է, կարելի է եզրակացնել, որ …

3.8. Բանավեճային, քննադատական բնույթի հոդվածները վերլուծող ռեֆերատներում օգտագործվող բայաձևեր՝

- հեղինակի դրական վերաբերմունքն արտահայտող՝ պաշտպանում է, համամիտ է, համաձայնում է, կիսում է, ապացուցում է (ինչը, ում), համոզում է, կանգնում է…դիրքերում,
- հեղինակի բացասական վերաբերմունքն արտահայտող՝ քննարկում է, վիճարկում է, մերժում է, չի համաձայնում (որ հարցում, ինչում, ում հետ), քննադատում է, վերանայում է, կասկածում է, մերժում է, մեղադրում է (ում, ինչում՝ գիտական անբարեխղճության, փաստերի աղավաղման և այլն), մերկացնում է, ձաղկում է…և այլն: